«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ**

Հետազոտող ուսուցիչ՝ Արտենյան Լուսինե Ռազմիկի

Դպրոց՝ «Երևանի Հ. Իսակովի անվ. թիվ132 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ.1 ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

1.1 Մեթոդական միավորումների աշխատանքը դպրոցում.....5

1.2 Ուսուցչի մասնակցությունը առարկայական մեթոդական միավորմների աշխատանքներին.....12

1.3 Փորձարարական մաս.....18

Եզրակացություններ.....20

Առաջարկություններ.....21

Օգտագործված գրականության ցանկ.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեթոդական միավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցիչների մեթոդական աշխատանքը կազմակերպող, համակարգող գլխավոր օղակն է: Մեթոդական աշխատանքը դպրոցում մի մանկավարժական համակարգ է, որի հիմնական գործառույթը լավագույն փորձի փոխանակման, մեթոդամանկավարժական և ուսումնադաստիարակչական հարցերի, արտադասարանական միջոցառումների կազմակերպման և այլ ուսումնական հարցերի քննարկման մեջ է կայանում, այլ խոսքով՝ մեթոդական միավորումների գործունեությունը միտված է ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը՝ հիմք ընդունելով կրթության որակի բարելավման անհրաժեշտությունը: Այս խորհրդակցական մարմնի գործունեությունը առանցքային դերակատարում ունի ուսուցիչների մանկավարժական աշխատանքի պլանավորման և իրականացման գործում: Սա մի համակարգ է, որն ամբողջացնում է մանկավարժական կոլեկտիվի ներուժը, մեկտեղում նոր ու հետաքրքիր գաղափարները, թույլ տալիս ստեղծել ու գործարկել հետաքրքիր ու նոր մտահաղացումներ՝ նպատակ ունենալով դպրոցում ստեղծել համագործակցային առողջ ու կառուցողական մթնելորտ:

Մեթոդական միավորումների գործունեությունը մեծապես միտված է այդ թվում նաև ուսուցիչների ստեղծագործական ներուժի համակարգմանը, քանի որ սա այն հարթակն է, որտեղ ուսուցիչները հնարավորություն ունեն բարձրաձայնել իրենց հուզող ուսումնական հարցերը, քննարկել դրանք, հանդես գալ նպատակային առաջարկություններով, նախագծել աշխատանքի իրականացման ճանապարհային քարտեզներ, քննարկել իրականացված փոխադարձ դասալսումներն ու կիսվել մանկավարժական օրինակելի փորձով: Մեթոդական միավորումների առաջնային շահակիցները ուսուցիչներն են, քանի որ աշխատանքն այստեղ ուղղված է հենց վերջիններիս մասնագիտական որակների, մեթոդաուսումնականկան գիտելիքների բարձրացմանը, ուստի յուրաքանչյուր ուսուցչի անհատական դերակատարումն առանցքային է մեթոդական միավորման գործառույթների արդյունավետ իրականացման համար:

Նոր աշխարհի առաջընթացի աննախադեպ աճը, բարձր տեխնոլոգիաների ներդրումն էապես դիպչում է նաև կրթական համակարգին: Կրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով բարեփոխում ու արդիականացվում է, ուստի ուսուցիչը պետք է հասցնի քայլել ժամանակին համընթաց, որպեսզի շարունակի կատարել կրթելու ու

դաստիարակելու իր գործառույթն արդյունավետ, իսկ այդ ճանապարհին գործընկերների հետ համագործակցումն ու օրինակելի փորձի փոխանակումը շատ կարևոր է:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ մեթոդական միավորումներում կոլեկտիվ աշխատանքը ուսուցչի համար այն հարթակն է, ուր նա կարող է սովորել, սովորեցնել, ուսումնասիրել, հետազոտել՝ բարձրացնելով իր մասնագիտական որակները:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է ուսուցչի գործառույթների ու մանկավարժական որակների նոր պահանջներով, իսկ մեթոդական միավորումները, որպես ուսուցիչների համախմբման ու փոխգործակցության առաջնային օղակ, կարող են իրենց դրական ազդեցությունը բերել ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացման, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացի առաջընթացի վրա:

Հետազոտության խնդիրը:

1. Ցույց տալ մեթոդական միավորումներ կազմելու անհրաժեշտությունը և դրանցում ներգրավված ուսուցիչների հնարավոր ձեռքբերումները:
2. Մատնանշել մեթոդմիավորումների ներսում իրականացվող աշխատանքների ազդեցությունը կրթության որակի բարձրացման վրա:
3. Շեշտադրել ուսուցչի մասնագիտական աճի հնարավոր եղանակները մեթոդմիավորումների իրականացրած աշխատանքների շրջանակներում:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել մեթոդական միավորումների՝ որպես ուսուցիչների փոխգործակցության առաջնային օղակի հիմնական դերը, գործառույթները, մեթոդական միավորումների նախագահների և անդամների գործառույթները, ինչպես նաև այս օղակի ազդեցությունը կրթության որակի բարձրացման վրա:

ԳԼՈՒԽ 1 ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

1.1 Մեթոդական միավորումների աշխատանքը դպրոցում

Հանրակրթական ուսումնական հաստատությունում մեթոդական աշխատանքի իրականացման ձևերից է մեթոդական միավորումների կազմակերպումը: Դրանք մոտ կամ հարակից առարկաներից կազված առարկայական մասնախմբեր են, որոնք իրականացնում են հատուկ կանոնակարգված գործունեություն: Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ[1]:

Մեթոդմիավորումների կազմման հարցում որոշում կայացնողը դպրոցի մանկավարժական խորհուրդն է: Մանկավարժական խորհուրդը խորհրդակցական մարմին է, որը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում[2]:

Ստացվում է, որ խորհրդի նիստում խորհրդակցական մարմնի անդամները քննարկում են մեթոդական միավորումների կազմման հարցն ու անհրաժեշտության դեպքում ընդունում այն: Աշակերտների թվով պայմանավորված՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում այդուհետ ձևավորվում են առարկայական մեթոդական միավորումներ մոտ կամ հարակից առարկաներից: Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից: Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում[3]: Այսպիսով, առարկայական մեթոդական միավորումը ուսումնական հաստատության մեթոդամանկավարժական գործունեության հիմնական կառուցվածքային տարրն է,

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀ Կառավարության որոշում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

որն իրականացնում է ուսումնական, դաստիարակչական, մեթոդական և արտադասարանական աշխատանքների համակարգումը դպրոցում:

Մեթոդական միավորումների թիվը որոշվում է՝ ելնելով ուսումնական հաստատության կողմից հանձնարարված խնդիրների համալիր լուծման անհրաժեշտությունից և հաստատվում դպրոցի տնօրենի հրամանով: Մեթոդական միավորումները ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են դպրոցի տնօրենի կողմից՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի առաջարկությամբ: Այս մարմինն իր աշխատանքով հաշվետու է ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենին: Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնական գծով տնօրենի տեղակալի պաշտոնային պարտականություններից է՝ ղեկավարել առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները, ընդհանրացնել և տարածել մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձը, աջակցել ուսուցման նոր մեթոդների ներդրմանը, ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին[4]:

Մասնագիտական զարգացման ներդպրոցական մշակույթի արմատավորման գործում էական դեր կարող է ունենալ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենների կարողությունների զարգացումը: Վերջիններս կարող են դպրոցներում կատարել ուսուցիչներին համախմբելու, համատեղ խմբային քննարկումներ և դասալսումներ անցկացնելու, սկսնակ ուսուցիչներին աջակցելու, վերապատրաստողների հետ դպրոցների կապն ապահովելու կարևորագույն աշխատանքը: Մեթոդական միավորումների ներսում ուսուցիչներին ցուցաբերվող մասնագիտական աջակցությունն առավել օգտակար և թիրախային դարձնելու համար բոլոր ուսուցիչների համար չպետք է իրականացնել միանման դասընթացներ: Հրկավոր է իրականացնել ուսուցիչների մասնագիտական զարգացման թեմատիկ դասընթացներ՝ հիմնվելով ուսուցիչների կարիքների և մասնագիտական պատրաստվածության վրա: Օրինակ՝ դասարանի կառավարում, առաջնորդություն, տեխնոլոգիաների կիրառում դասապրոցեսում, հետ մնացող աշակերտների հետ աշխատելու հմտություններ, շնորհալի աշակերտների հետ աշխատելու հմտություններ, գնահատման հմտություններ և այլն: Ստացվում է , որ մասնագիտական զարգացման ազդեցիկ միջոց է դպրոցի ներսում ուսուցիչների համագործակցությունը: Այս մոտեցման դեպքում ստեղծվում են ուսուցչական խմբեր, որոնք համատեղ մշակում են դասի պլաններ, վարում և դիտարկում են դասեր, ապա կատարում դասերի վերլուծություններ: Նման դեպքերում ուսուցիչները

[4] Նույն տեղում:

առաջարկներ և դիտողություններ են ստանում իրենց գործընկերներից և հնարավորություն ունենում բարելավելու իրենց աշխատանքը:

Մեթոդական միավորումների գործունեության հիմքում սովորողի իրավունքներն ու շահերն են, այն առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով, կառավարության որոշումներով՝ հաշվի առնելով կրթական մարմինների բոլոր մակարդակների սովորողների շահերն ու իրավունքները: Այս մարմնի գործունեության հիմքում ընկած է սովորողների կրթությունն ու դաստիարակությունը, ինչպես նաև դպրոցի կանոնադրությունը, օրենքով սահմանված կարգով տնօրենի հրամաններն ու ցուցումները:

Մեթոդական միավորումը, որպես դպրոցի կառուցվածքային միավոր, ստեղծվում է ուսումնական հաստատության հետևյալ խնդիրները լուծելու համար.

- ուսուցիչների մասնագիտական որակների զարգացում,
- կրթության վերաբերյալ նորմատիվային և մեթոդական փաստաթղթերի ուսումնասիրություն,
- ուսումնական պլանների, թեմատիկ պլանների պատրաստում,
- տարբեր տեսակի դասերի անցկացման մեթոդաբանության կատարելագործում և դրանց կրթական, մեթոդական և նյութատեխնիկական աջակցություն,
- մանկավարժական փորձերի, փոխադարձ դասալսումների անցկացում, արդյունքների քննարկում, վերջնարդյունքների ամփոփում հաշվետվությունների տեսքով,
- հեղինակային ծրագրերի, մեթոդների վերլուծություն,
- ավարտական դասարանների բանավոր քննությունների համար նախատեսված հարցաշարերի, թեստային աշխատանքների համալիր քննարկում, պատրաստում,
- ատեստավորման նյութերի համակարգում,
- ծանոթացում ներդպրոցական ուսումնական գործընթացին,
- առարկայի դասավանդման վիճակի մշտադիտարկում, վերլուծություն,
- ինտեգրված դասերի պլանավորում, իրականացում, արդյունքների վերլուծություն,
- կոնկրետ թեմայով բաց դասերի կազմակերպում՝ առարկայի բարդ թեմաների մեթոդաբանական զարգացումներին ծանոթանալու նպատակով,
- առաջադեմ մանկավարժական փորձի ուսումնասիրություն և ընդհանրացում,

- բարձր մասնագիտական մակարդակով ուսումնական, մեթոդական և փորձարարական աշխատանքի կազմակերպում և անցկացում մեկ կամ մի քանի հարակից առարկաներից,
- թեմայի վերաբերյալ մեթոդական զարգացումներին ծանոթացում, առարկայի դասավանդման մեթոդների վերլուծություն,
- հաշվետվությունների պատրաստում ուսուցիչների մասնագիտական ինքնակրթության, խորացված վերապատրաստման դասընթացների մասին,
- ուսուցման մեթոդների քննարկում, փորձնական կիրառում,
- նորարարական տեխնոլոգիաների ուսումնասիրություն և ներդնում,
- առարկայական օլիմպիադաների ներդպրոցական փուլի կազմակերպում և անցկացում,
- առարկայական օլիմպիադաների մարզային և հանրապետական փուլերին մասնակցող սովորողների նախապատրաստում,
- գիտաժողովների, մրցույթների կազմակերպում և անցկացում,
- մատենավարական աշխատանքների իրականացում, վերահսկում,
- ուսումնական գրավոր աշխատանքների պլանավորում, հարցաշարերի կազմում և իրականացում,
- սահմանված կարգով փորձարկվող դասագրքերի փորձաքննության կազմակերպում,
- ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկի ներկայացում դպրոցի տնօրենին,
- սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գրավոր աշխատանքների արդյունքների քննարկում:

Ստացվում է, որ մեթոդական միավորումների աշխատանքը բազմաբնույթ է: Այն միտված է ուսուցչի մասնագիտական որակների բարձրացմանը՝խրախուսելով կոլեկտիվում աշխատելու և համագործակցելու վերջինիս ցանկությունը: Առարկայական մեթոդական միավորման բոլոր անդամներն ունեն հավասարազոր իրավունքներ ու պարտականություններ: Իրենց կատարած աշխատանքով վերջիններս հաշվետու են մեթոդական միավորման նախագահին, ով ի պաշտոնե, համակարգում է միավորման աշխատանքները՝ դրանք ամփոփելով միավորման նիստերի ժամանակ: Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով

նիստերն արձանագրվում են[5]: Կրթության առաջին՝ տարրական օղանը, որպես կանոն կազմում է իր առարկայական մեթոդական միավորումը. դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում: Միջին և ավագ դպրոցների ուսուցչական կազմն ընդգրկվում է այլ առարկայական ստորաբաժանումներում՝հումանիտար, բնագիտական, ռազմահայրենասիրական, ընդհանրական: Առարկայական մեթոդական միավորման նիստերի ընթացքում նախագահը, ով վարում է նիստը, ծանոթացնում է նախօրոք կազմված օրակարգին, որի հաստատման դեպքում, նիստի ընթացքն արձանագրվում է: Նիստում քննարկված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ընդունվում են որոշումներ, որոնք տեղ են գտնում արձանագրության մեջ: Դպրոցի առարկայական մեթոդական միավորումները կարող են անցկացնել նաև ինտեգրված քննարկումներ մի քանի օղակներով:

Նիստի ընթացքում կարող են քննարկվել հետևյալ հարցերը.

- ✓ քննարկվում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալիս երաշխավորություններ,
- ✓ քննարկվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը,
- ✓ քննարկվում է դպրոցում նախատեսվող ուսումնադաստիարակչական միջոցառումների, պետական և այլ նշանակության տոների կազմակերպման ու անցկացման, հիշատակի օրերի, ոգեկոչման արարողությունների կազմակերպան ու անցկացման հարցը,
- ✓ քննարկվում է դպրոցում նախատեսվող մրցույթների, վիկտորինաների, ընթերցումների կազմակերպման ու իրականացման հարցը,
- ✓ դպրոցում այս կամ այն առարկայի միամսյակ հայտարարելու հարցը;
- ✓ աշխատանքն արդյունավետ բաժանելու հարցը,
- ✓ դպրոցում գործող խորհրդակցական այլ մարմինների հետ համագործակցելու հարցը,
- ✓ քննարկվում է սկսնակ ուսուցիչներին մեթոդամանկավարժական ուղղորդում տալու և փորձի փոխանակումն արդյունավետ իրականացնելու հարցը:

[5] Նույն տեղում:

Մեթոդական միավորման աշխատանքները ղեկավարում է դպրոցի տնօրենի կողմից առաջարկված և մանկավարժական խորհրդի հավանությանն արժանացած ամենափորձառու ուսուցիչներից մեկը, ով աչքի է ընկնում նաև իր մարդկային որակներով, կառավարման փորձով ու մասնագիտական ու մեթոդամանկավարժական գիտելիքներով: Մեթոդական միավորման աշխատանքներն իրականացվում են ընթացիկ ուսումնական տարվա աշխատանքային պլանին համապատասխան, պլանը կազմում է մեթոդմիավորման ղեկավարը, քննարկվում մեթոդմիավորման նիստում՝ նախօրոք համաձայնեցնելով մեթոդական գծով փոխտնօրենի հետ: Մեթոդական միավորումների գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում են դպրոցի տնօրենը և ուսումնական գծով տնօրենի տեղակալը: Առարկայական մեթոդական միավորումներն իրենց կատարած մատենավարական աշխատանքներով հաշվետու են ուսումնական գծով փոխտնօրենին:

Այդպիսի փաստաթղթերից են.

- ✓ մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլան,
- ✓ մեթոդական միավորման նիստերի արձանագրություններ,
- ✓ անցած ուսումնական տարվա աշխատանքի վերլուծություն,
- ✓ առարկայական մեթոդական միավորման անդամների կատարած մեթոդական, ուսումնադաստիարակչական հետազոտություններ,
- ✓ տեղեկատվություն ուսուցիչների ինքնակրթության մասին,
- ✓ փոխադարձ դասալսումների արձանագրություններ,
- ✓ իրականացված հանդիպումների, կոնֆերանսների, սեմինարների, կլոր սեղանների, հաշվետվություններ,
- ✓ ատեստավորում անցած ուսուցիչների հավաստագրեր,
- ✓ իրականացրած արտադպրոցական միջոցառումների հաշվետվություններ ու պլաններ,
- ✓ հաշվետվություն անհրաժեշտ մեթոդական ու դիդակտիկ աջակցության մասին:

Բոլոր մեթոդական միավորումներն իրականացնում են առարկայի վերաբերյալ ժամանակակից ուսուցման հայեցակարգերի ուսումնասիրություններ, վերահսկում դասավանդման արդյունավետությունը՝ օգտագործելով այլընտրանքային միջոցներ, գործիքներ ու դասագրքեր: Եթե մեթոդական աշխատանքը դպրոցում լավ է կազմակերպված, ապա հնարավոր կլինի ընդգծված կերպով բարձրացնել ուսումնադաստիարակչական գործընթացի որակը: Այս պարագայում ստացվում է , որ ուսուցիչների համագործակցությունը կարելի է համարել գերազանց: Ուսուցիչը,

համագործակցելով մեթոդմիավորման մյուս անդամների հետ, կուտակում է նոր գիտելիքներ, հմտություններ, իր առջև դնում մի շարք իրավիճակային խնդիրներ ու փորձում լուծումներ գտնել: Հարակից առարկաների հիմունքների իմացությունը նույնպես ուսուցչի համար պարտադիր է, քանի որ սովորողների հայացքների, համոզմունքների, ընդհանրապես աշխարհայացքի ձևավորումը նաև իրականացվում է միջառարկայական կապերի միջոցով[6]:

Այստեղից կարող ենք եզրահանգել, որ առողջ համագործակցությունը ուսուցիչների միջև կարող է նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

[6] http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf Յու. Ամիրջանյան, Ս. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2005, էջ 84:

1.2 Ուսուցչի մասնակցությունը առարկայական մեթոդական միավորմների աշխատանքներին

Վերջին շրջանում ավելի ու ավելի հաճախ են հնչում արտահայտություններ՝ կյանքի որակ, կրթության որակ, սոցիալական հաջողություն: Կրթության որակի բարելավումը ՀՀ կրթութական համակարգի արդիականացման հիմնական խնդիրներից է: Իհարկե, առանց նորարարական տեխնոլոգիաների, ժամանակակից ուսումնական միջոցների ներդրման, ուսուցչի մասնագիտական որակների բարձրացման, առաջադեմ մանկավարժական փորձի բացահայտման և տարածման դրան հնարավոր չէ հասնել, ինչպես անհնար է հասնել առանց յուրաքանչյուր ուսուցչի պրոֆեսիոնալիզմի բարձրացման: Ուստի, կարող ենք հստակ նշել, որ առարկայական մեթոդական միավորումների գործառույթը դպրոցում ուղղված է հենց այդ նպատակին:

Կարող ենք վստահաբար արձանագրել, որ դպրոցի գործունեության դրական արդյունքները ուղիղ համեմատական են յուրաքանչյուր աշակերտի անհատական հաջողություններին, կրթական նվաճումներին, ուստի յուրաքանչյուր ուսուցիչ պետք է մեծ ուշադրություն դարձնի իր անձի ինքնակատարելագործմանը, ինքնակրթությանը, դասերին պատրաստ ներկայանալուն և արտադասարանական գործունեությանը: Որքան մեծ է ուսուցչի պատասխանատվության զգացումը, կատարելագործվելու, որպես նորորոր հանդես գալու ցանկությունը, այդքան բարձր է կրթության որակը:

Այս առումով անգնահատելի է մեթոդական միավորումների աշխատանքը դպրոցում: Այստեղ իրականացված բազմաբովանդակ գործառույթները օգնում են ուսուցչին համակարգել իր ողջ մարդկային ներուժը, աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար, գնալ նոր ու հետաքրքիր գաղափարների որոնման ճանապարհով, ինչի արդյունքում աշխատանքը դառնում է համակարգված ու արդյունավետ: Ուսումնական գործընթացը համակարգվում է, քանի որ մի նպատակի իրագործման համար աշխատում է մանկավարժների ամբողջ մի թիմ, բացառվում է ցանկացած անհատական շահ, բոլորը գործում են՝նպատակ ունենալով համակարգել ուսումնադաստիարակչական գործընթացն ու բարձրացնել կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների կրթության որակը: Կրթության որակ հասկացությունը սերտորեն առնչվում է կրթության մատչելիությանը և, չնայած սրանք երկու տարբեր հասկացություններ են, այնուամենայնիվ փոխլրացնում են միմյանց: Եթե կրթության որակը հնարավոր չէ առանց կրթության մատչելիության,

ապա մատչելիությունը իմաստազրկվում է առանց համապատասխան կրթական որակի ապահովման: Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում անհատապես կամ կոլեկտիվ եղանակով: Գիտելիքաստեղծ գործունեությունը որակյալ կրթության հիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահեն տնտեսության, ժողովրդավարական հասարակարգի զարգացման, կյանքի զարգացման նոր ուղիների ու մոդելների ստեղծման ու զարգացման[7]: Ստացվում է, որ կրթության որակ ու մատչելիություն հասկացությունները խիստ համադրելի են, ուստի մեթոդական միավորման անդամ ուսուցիչները ևս պետք է իրենց գործունեության հիմքում դնեն մատչելիությունն ու հասանելիությունը:

Ուսուցիչները, մեթոդական միավորումներում իրենց աշխատանքը պլանավորելիս, պետք է հաշվի առնեն կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների շահերը: Ստացվում է, որ սովորողը նույնպես որոշակի կերպով, թեկուզ անուղղակի մասնակցում են կրթական համակարգի այս կամ այն օղակի աշխատանքներին: Սովորողների մասնակցությունը կրթական գործընթացին ենթադրում է, որ նրանք պետք է դառնան այդ գործընթացի գործընկերային կողմ՝ իրենց դերերով, պատասխանատվությամբ ու իրավասության շրջանակով: Այս սկզբունքի համաձայն սովորողի ու ուսուցչի միջև պետք է գործի համագործակցություն, վստահություն, և հարգանք, քանի որ կրթողները իրենց ևս սովորողներ են և սովորողը կարող է աղբյուր հանդիսանալ կրթողի համար նոր գիտելիքների ձեռքբերման համար[8]:

Աջակցող կրթական միջավայրը կրթական գործընթացի կարևորագույն կողմերից է, որտեղ պետք է գերիշխի փոխադարձ վստահության մթնոլորտը, հարգանքը, ինչն իր հերթին խթան է հանդիսանում ստեղծագործականության և ինքնուրույնության համար: Այն իր հերթին կարևորում է կոլեկտիվ ուսուցումը և ամրապնդում սովորողների միջև հարաբերությունները: Այս տեսանկյունից կարող ենք նկատել, որ սկսնակ ուսուցչին մեթոդական միավորման ներսում ևս կարող ենք դիտարկել որպես «սովորող», ուստի գործընկերների կողմից պետք է ստեղծվի փոխօգնության, աջակցման միջավայր, այլ խոսքով՝ մեթոդական միավորման նախագահն ու փորձառու անդամները պետք է առաջնորդվեն ժողովրդավարական և ոչ-խստրական սկզբունքներով՝հարգելով բազմազանությունն ու հանդուրժողականությունը: Եթե փորձենք վերլուծել ուսուցչի անհատական

[7] http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում, էջ 4:
[8] Նույն տեղում, էջ 15:

աշխատանքն ու ֆունկցիոնալ պարտականությունները մեթոդական միավորման ներսում, ապա պարզ է դառնում, որ ուսուցիչների զբաղվածությունն ավելանում է աննշան չափով: Այն գործառույթները, որոնք ուսուցիչն իրականացնում է միավորման ներսում, բացառապես նպաստում են վերջինիս մանկավարժական հմտությունների ձեռքբերմանն ու արդյունավետ գործունեություն իրականացնելուն: Ուսուցչի մասնակցությունը մեթոդական միավորմանը նպաստում է մասնագիտական վարպետության, մեթոդական կուլտուրայի, ստեղծագործական ներուժի բարձրացմանը: Մեթոդական աշխատանքների իրականացման հիմնական ձևերից են.

- ✓ դասախոսություն, սեմինար, գործնական սեմինար,
- ✓ ստեղծագործական բանավեճ,
- ✓ հյուրասրահ, կոլեկտիվ ստեղծագործ աշխատանքի ժամ,
- ✓ գործնական խաղեր, իրավիճակային ուսուցում, դերային խաղեր,
- ✓ մեթոդական մրցույթներ, մեթոդական գաղափարների տոնավաճառ, մեթոդական վարպետության դասեր:

Չևաչափի ընտրության առումով ոչ մի սահմանափոկում չկա: Յուրաքանչյուր մեթոդական միավորման անդամ կարող է հանդես գալ իր առաջարկով՝ բերելով իր նորարարական միտքը: Մեթոդական միավորման անդամները կարող են ստանալ հատուկ հանձնարարություններ, որոնց արդյունքները կքննարկվեն նիստերի ժամանակ**:** Նմանօրինակ հանձնարարություններից են.

- ✓ դասի մոդելավորում՝ որոշակի մեթոդների կիրառմամբ,
- ✓ տրված թեմայով դասերի մշակումներ,
- ✓ որոշակի թեմայով հետազոտություններ կատարելու ծրագրերի մշակում,
- ✓ ըստ որոշակի թեմայի, պրոբլեմի գրականության ընտրություն;
- ✓ ստուգիչ նյութերի, թեստերի կազմում,
- ✓ հուշագրերի, դիդակտիկ նյութերի կազմում, պատրաստում,
- ✓ առարկայական, արտադասարանական միջոցառումների մշակում և իրականացում,
- ✓ այցելություններ դասերի, արտադասարանական միջոցառումների՝ վերլուծություններով,
- ✓ տրված թեմայի, խնդրի վերաբերյալ սեփական փորձի ներկայացում,
- ✓ աշխատանք՝ ինքնակրթության համար ընտրված թեմայի շուրջ,
- ✓ որոշակի պրոբլեմի շուրջ զեկուցման նախապատրաստում,
- ✓ ուսումնասիրած թեմայի, խնդրի շուրջ շնորհանդեսի նախապատրաստում,
- ✓ սեփական հետազոտությունների շրջանակում ձեռքբերումների ներկայացում:

Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներում առանձնակի կարևորություն է տրվում նաև ուսուցիչների ինքնակրթության կազմակերպմանը: Ուսուցչի ինքնակրթությամբ զբաղվելու ցանկությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից են՝

- ինքնակրթվելու անհրաժեշտության գիտակցում,
- նորարար ուսուցիչ լինելու ցանկություն,
- աշխատանքի որակի բարձրացում,
- առաջ գնալու ձգտում:
- ստեղծագործելու ցանկություն,
- մրցակցություն,
- հասարակական կարծիք,
- նյութական շահագրգռվածություն,
- հետաքրքրասիրություն:

Մեթոդմիավորման աշխատանքն անհրաժեշտ է կառուցել ընդհանուր մանկավարժական խնդիրների շուրջ, որն այդ պահին ծառացել է դպրոցի առջև: Ընդհանուր թեմայի քննարկման ընթացքում մեթոդմիավորման նիստերում ցանկալի է կոնկրետացնել այն: Թեմայի որոշումից հետո անհրաժեշտ է նշել դրա գործնական ելքի ձևը. ելույթներ սեմինարներում, բաց դասի ընթացքում աշխատանքի փորձի ներկայացում և այլն: Մեթոդական աշխատանքի ժամանակակից մակարդակի ապահովման համար կրթական հաստատությունում կարևոր է կազմակերպել աշխատանք՝ ուսուցիչներին նորմատիվ փաստաթղթերի, մեթոդական և առարկայական նոր գրականության ծանոթացման ուղղությամբ:

Մանկավարժական վարպետության կատարելագործման նպատակով մեթոդմիավորումը կազմում է դասերին փոխադարձ այցելությունների պլան-գրաֆիկ: Ինչպես վերը նշել էինք՝մեթոդմիավորման աշխատանքում մեծ նշանակություն ունի վարպետ ուսուցչի և սկսնակ մասնագետների միջև ծավալվող գործունեությունը: Այս առումով անչափ կարևոր է յուրաքանչյուր ուսուցչի մասնագիտական որակները, Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

Ուսուցչի մասնագիտական որակներից են՝

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն,

- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն;
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն,
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն,
- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն[9]:

Մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանն իր մեջ ներառում է միավորման աշխատանքի բովանդակությունը, հիմնախնդիրներն ու յուրաքանչյուր անդամի անհատական ու համալիր աշխատանքը: Պլանում կարող են տեղ գտնել հետևյալ դրույթները.

- ✓ առարկայի տեսական և դասավանդման մեթոդիկայի հարցեր,
- ✓ մանկավարժությունից և հոգեբանությունից մասնագետների ելույթներ,
- ✓ ծրագրում ընդգրկված բարդություն ներկայացնող հարցերի ուսումնասիրում և այդ կապակցությամբ մեթոդամանկավարժական գրականության իրազեկում,
- ✓ նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրում,
- ✓ նոր դասագրքերի ուսումնասիրում,
- ✓ միջառարկայական կապերի հարցեր,
- ✓ տետրերի ստուգման հարցեր,
- ✓ մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման և տարածման աշխատանք,
- ✓ սեմինարների կազմակերպում՝ գործնականության ապահովմամբ,
- ✓ նպատակային փոխադարձ դասալսումների, բաց դասերի իրականացում,
- ✓ ուսուցիչների դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և արդյունքների քննարկում,
- ✓ սկսնակ ուսուցիչների հետ աշխատանքի կազմակերպում և իրականացում,
- ✓ քննական նյութի նախապատրաստում,
- ✓ ինքնակրթության վերաբերյալ ուսուցիչների հաշվետվությունների ստուգում,
- ✓ ցուցահանդեսների, դիդակտիկ նյութերի, զննական միջոցների նախագծում և իրականացում,

[9] Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», էջ 13:

- ✓ սովորողների ստեղծագործական աշխատանքներ,
- ✓ առարկայական արտադասարանական աշխատանքներ:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ մեթոդական միավորումների աշխատանքը դպրոցում մեծապես նպաստում է կրթության որակի բարձրացմանը և կառուցվում է յուրաքանչյուր անդամի աշխատանքի հիման վրա: Այս օղակի արդյունավետ աշխաանքի դեպքում ուսումնական հաստատությունում չեն առաջանա ո'չ կարգապահական, ոչ ուսումնական հնարավոր բարդություններ:

Կարծում ենք՝ այս աշխատանքը մեծապես կօժանդակի մեզ մանկավարժական գործընթացում մեր մեր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու համար:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Որպեսզի պարզենք, թե որքանով է մեթոդական միավորումը ծառայում իր նպատակին, թվով տասը ուսուցիչների շրջանում կատարեցինք հարցումներ: Հարցման մասնակիցները լրացրեցին հետևյալ հարցաթերթը.

1. Մասնակցու՞մ եք մեթոդմիավորման նիստերին:
2. Ինչպե՞ս կգնահատեք մեթոդմիավորման շրջանակներում կազմակերպված դասախոսությունները, սեմինարները, բանավեճերը, կոլեկտիվ ստեղծագործ աշխատանքները:
3. Ինչպե՞ս կգնահատեք մեթոդմիավորման շրջանակներում կազմակերպված գործնական խաղերը, մեթոդական մրցույթները, մեթոդական վարպետության դասերը:
4. Ինպե՞ս կգնահատեք մոթոդմիավորման ներսում տիրող բարոյահոգեբանական միջավայրը:
5. Ինչպե՞ս կգնահատեք ուսուցիչների համագործակցության արդյունքները մեթոդմիավորման շրջանակներում կրթության որակի բարձրացման վրա:

Հարցումների մասնակից ուսուցիչների հիմնական մասը դրական էին գնահատում մեթոդական միավորման ներսում ուսուցիչների համագործակցության նշանակությունը կրթության որակի բարձրացման, դպրոցում մանկավարժական աշխատանքի համակարգման ու բարոյահոգեբանական կայուն միջավայրի ապահովման տեսանկյունից: Հիմնական մասն այն կարծիքին էր, որ մեթոդական միավորումներում իրենց աշխատաքը մեծապես օգնում է կրթական ոլորտում նորարարություններին ծանոթացմանը, կոլեկտիվում դրանց քննարկումների ու փորձարկումների տեսանկյունից: Կարևորվեց նաև մանկավարժական օրինակելի փորձի փոխանակման հանգամանքը:

Այսպիսով, ամբողջացնենք հարցման մասնակից ուսուցիչների պատասխանները:



Այսպիսով, ամբողջացնելով ուսուցիչների կարծիքները՝ կրկին վերահաստատենք մեր այն պնդումը, որ մեթոդմիավորումների աշխատանքն ուղղակի անհրաժեշտություն է և մեծապես պայմանավորում է ուսուցիչների առողջ ու նպատակային համագործակցությունը դպրոցում: Այս մարմնի վերահսկողական գործառույթը բարձրացնում է ուսուցիչների պատասխանատվության զգացումն ու նպաստում դպրոցում մանկավարժական ներուժի համակարգմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչների ջանքերը, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքին, միշտ էլ արդարացված են: Դրա վառ ապացույցը սովորողների զանազան նվաճումներն ու ձեռքբերումներն են: Իսկ արգասաբեր գործելու համար ուսուցիչը պետք է կանոնակարգի ու համակարգի իր աշխատանքը՝ անդադար քայլելով նոր մտքերի, կարողությունների, հմտությունների ու տեխնոլոգիաների հետևից: Ուսուցիչին նման հնարավորություն է ընձեռում փոխգործակցային աշխատանքը հանրակրթական ուսումնական հաստատության խորհրդակցական մարմին համարվող առարկայական մեթոդական միավորման ներսում, որտեղ ուսուցիչն ունի անսահմանափակ հնարավորություններ սեփական մասնագիտական պահանջմունքները բավարարելու համար:

Կոլեկտիվ մոտեցումը հնարավոր հիմնախնդիրներին հնարավորություն է տալիս ուսուցչին ավելի մոտիվացվել, ուսումնասիրել ոլորտում առկա խնդիրներն ու նորությունները, կիսվել սեփական փորձով, սովորել ու սովորեցնել՝ նպատակ ունենալով ապահովել արդի կրթական համակարգի սահմանած պահանջներն ուսուցչից:

Աներկբա է, որ այս պարագայում ամեն բան հենց ուսուցչից է կախված: Եթե կա մոտիվացիա, լավն արարելու, առաջ գնալու ձգտում, ապա տեխնոլոգիապես հագեցած այս ժամանակաշրջանում հնարավոր է գտնել ուղիներ ոլորտում հաղթանակների հասնելու՝ ի շահ երկրի բարգավաճման, մատաղ սերդի կրթության ու դաստիարակության:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ Կրթության ոլորտի նորարարությունների վերաբերյալ հաճախակի կազմակերպել քննարկումներ՝ ընդգրկելով կրթության ոլորտի փորձագետների, կրթության կազմակերպիչների;
- ✓ Մշակել արդյունավետ ռազմավարություն մեթոդական միավորման անդամների միջև աշխատանքը հավասար բաժանելու համար;
- ✓ Ձեռնարկել անհրաժեշտ քայլեր մեթոդական միավորումների առավել ակտիվ անդամներին հաճախակի խրախուսելու համար;
- ✓ Մեծացնել վերահսկողությունը սկսնակ ուսուցիչների աշխատանքի նկատմամբ:
- ✓ Հասարակագիտություն առարկայից հաճախակի անցկացնել ինտեգրված դասեր՝ թույլ տալով սովորողներին համագործակցել թե՛ դասընկերների, թե՛ ուսուցիչների հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876
   ՀՀ Կառավարության որոշում:
2. http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում:
3. Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»:
4. http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf
   Յու. Ամիրջանյան, Ս. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2005, էջ 84:
5. https://escs.am/files/files/2020-07-17/50b54b298cdad8a2d7363192620d96e8.pdf
   Հանրակրթական «Հասարակագիտություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ: